8343

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԱՄ. Կ (Բ) Կ-Ի ՄԵՋ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՄ. Կ (Բ) Կ ԹԵԿՆԱԾՈՒ ՅԵՎ ԱՆԴԱՄ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԴԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1938 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

3 Kп 3
2-22

[illegible] ենտգործկոմի հրատարակչություն
«Խորհրդային Հայաստան»

Յերեվան 1938 թ.

ЗКПЗ
Հ-22
24 SEP 2006
09 DEC 2008
կր.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# ՀԱՄ. Կ (Բ) Կ-Ի ՄԵՋ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՄ. Կ (Բ) Կ ԹԵԿՆԱԾՈՒ ՈՒ ԱՆԴԱՄ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԴԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1938 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի հրատարակչություն
«Խորհրդային Հայաստան»
Յերևան 1938 թ.

17.09.2013

8343

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

2406
38

# ՀԱՄ. Կ(Բ)Կ-Ի ՄԵՋ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Կուսակցական փաստաթղթերի փոխանակումն ավարտվելու կապակցությամբ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի 1935 թվականի դեկտեմբերի 25-ի վորոշման համապատասխան, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին 1936 թվականի նոյեմբերի 1-ից սկսել կուսակցության անդամության թեկնածուներ ընդունելը և թեկնածուներին ՀամԿ(բ)Կ-ի անդամ փոխադրելը:*

*Վերսկսելով ընդունելությունը կուսակցության մեջ, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն անհրաժեշտ է համարում հիշեցնել բոլոր կուսակցական կազմակերպություններին, վոր ՀամԿ(բ)Կ-ի շարքերի վորակական կազմի հետագա բարձրացման գործը նրանցից պահանջում է նախ և առաջ մինչև վերջը յուրացնել կուսակցական փաստաթղթերի ստուգումից ու փոխանակումից բխող դասերը, վորոնցից գլխավորները հետևյալներն են.*

*Ա) Կուսակցության շարքերի վորոշ աղտոտումը, ինչպես այդ ցույց տվին կուսակցական փաստաթղթերի ստուգումն ու փոխանակումը, արդյունք է յեղել*

այն բանի, որ շատ տեղական կուսակցական կազմակերպություններ մոռացության եյին տվել կուսակցության նոր անդամների ընտրության լենինյան սկզբունքը, որը ձևակերպված ե ՀամԿ(բ)Կ-ի կանոնադրության մեջ և պահանջում ե կուսակցության մեջ ընդունելությունը կատարել բացառապես անհատական կարգով:

Շատ կուսակցական կազմակերպություններում կուսակցության կանոնադրության այդ կարևորագույն դրույթը սիստեմատիկաբար խախտվում եր: Փոխանակ ՀամԿ(բ)Կ-ի շարքերն ընդունվողների անհատական ընտրություն կատարելու, խմբովին, համախառն վերաբերմունք ե գոյություն ունեցել դեպի կուսակցության նոր անդամների ու թեկնածուների ընդունելությունը, լայնորեն կիրառվել ե խմբովին կուսակցության մեջ ընդունելու պրակտիկան, կուսակցության մեջ ընդունվելու վերաբերյալ դիմումներն ընդունվել և քննության են առնվել ցուցակներով, առանց առանձնապես քննելու ՀամԿ(բ)Կ-ի մեջ յուրաքանչյուր նոր ընդունվողի հարցը:

Կուսակցությունը պահանջում ե, որ այս թերությունը վերացվի առանց մնացորդի:

Բ) ՀամԿ(բ)Կ շրջկոմները կուսակցության անդամների կազմի կարգավորման ամբողջ գործը վերավստահել եյին սկզբնական կուսակցական կազմակերպություններին: ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամների հաստատումը կուսակցության շատ շրջկոմներում, իբրև կանոն, կատարվում եր հեռակայորեն, հաճախ հարցման կարգով, առանց նոր ընդունվողներին շրջկոմ հրավիրելու, առանց յերաշխավորությունների ճշտությունն ստուգելու, առանց ընդունվողների զանազան կատե-



գորիաների նկատմամբ կուսակցության կանոնադրության հատուկ պահանջները պահպանելու:

Կուսակցության շատ շրջկոմներ այնքան եյին մի կողմ քաշվում ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամների ընդունելության գործից, որ նույնիսկ կուսակցական տոմսեր ու թեկնածուական քարտեր տալը հանձնարարում եյին հաճախ անմիջականորեն սկզբնական կուսակցական կազմակերպություններին և կուսակցության նոր անդամների ընդունելությունը ղեկավարելու իրենց դերը վեր եյին ածում կուսակցական կազմակերպություններին կուսակցական տոմսերի ու թեկնածուական քարտերի մաքուր բլանկներ մատակարարելու տեխնիկական ֆունկցիայի:

Այս թերությունը նույնպես անհրաժեշտ ե անհապաղ վերացնել:

Գ) Սկզբնական կուսակցական կազմակերպությունները, առանձնապես խոշոր կազմակերպությունները, ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամների ընդունելության ժամանակ նույնպես չեյին պահպանում կուսակցության կանոնադրության պահանջները: Դա արտահայտվում եր այն բանում, որ նրանք կուսակցական ժողովներում քննության չեյին առնում կուսակցության մեջ նոր ընդունվողների թեկնածությունները, անպատասխանատու վերաբերմունք եյին ունենում դեպի յերաշխավորությունների ստուգումը և հաճախ ՀամԿ(բ)Կ-ի մեջ նոր անդամներ ընդունելու գործը վերավստահում եյին կուսակցության աճման հատուկ սեկտորներին:

Սկզբնական կուսակցական կազմակերպությունների շատ ղեկավարներ ՀամԿ(բ)Կ-ի շարքերում նոր անդամներ ընդունելու գործի նկատմամբ իրենց ամբողջ ղեկավարությունը վեր եյին ածել կուսակցու-

թյան մեջ ընդունելության քանակական առաջադրանքներ սահմանելուն, և դրանով իսկ այդ գործի նշանակությունն իջեցրել էին մինչև ընթացիկ կամպանիաների մակարդակը:

Սրանից պարզ է, որ կուսկազմակերպությունների շատ ղեկավարներ մոռացություն են տվել Լենինի այն ցուցումը, թե մեր կուսակցությունը «միակ կառավարական կուսակցությունն է աշխարհում, որը հոգ է տանում ոչ թե անդամների թվի ավելացման, այլ նրանց որակի բարձրացման մասին»:

Սրանից պարզ է նաև, որ այդպիսի ղեկավարները մոռացել են, թե կուսակցության աճումը կարգավորելու գործում անհրաժեշտ է յերևան բերել բոլշևիկյան զգաստություն, որովհետև խորթ, կուսակցությանը թշնամի տարրերը միշտ ձգտել են մտնել ՀամԿ(բ)Կ-ի շարքերը, որպեսզի կուսակցության անդամի կոչման տակ թաքնված՝ վիժեցնեն բանվոր դասակարգի մեծ գործը:

Կուսակցության մեջ ընդունելություն կատարելու ժամանակ անհրաժեշտ է այս բոլոր դասերն ամենախիստ կերպով հաշվի առնել:

Սրան համապատասխան, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին՝ ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամների ընդունելության աշխատանքում ղեկավարվել հետևյալ ցուցումներով.

1. Կուսակցական կազմակերպությունները, ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամների անհատական ընդունելությունը կատարելով խստորեն, կուսակցության մեջ ընդունելու համար պետք է ընտրեն մեր յերկրի իսկապես առաջավոր, բանվոր դասակարգի գործին իսկապես նվիրված լավագույն մարդկանց, նախ և առաջ բանվորներից, ինչպես նաև գյուղացիներից ու աշխատավոր ինտելիգենցիայից, որոնք ստուգված են սոցիալիզմի համար մղվող պայքարի զանազան բնագավառներում:



2. Կուսակցության թեկնածուների ընդունելությունը և թեկնածուներին կուսակցության անդամ փոխադրելը, ինչպես սկզբնական կուսակցական կազմակերպություններում, այնպես և կուսակցության շրջկոմներում ու քաղկոմներում պետք է կատարվի խիստ անհատական կարգով և ոչ կոլեկտիվ կերպով ու ոչ խմբովին:

Կուսակցության մեջ յուրաքանչյուր նոր ընդունվող պետք է կուսակցության կազմակերպությանը ներկայացնի անձամբ իր կողմից գրված դիմում՝ կուսակցության մեջ ընդունվելու ցանկության մասին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից սահմանված ձևի հարցաթերթիկ, յերաշխավորություններ՝ ՀամԿ(բ)Կ կանոնադրության պահանջների համաձայն և գնահատականներ այն կազմակերպություններից, որտեղ աշխատել կամ աշխատում է կուսակցության մեջ ընդունվողը:

Նախ քան կուսակցության մեջ ընդունվելու դիմումի քննարկումը, սկզբնական կուսկազմակերպությունները, ՀամԿ(բ)Կ շրջկոմներն ու քաղկոմները պարտավոր են ստուգել կուսակցության մեջ ընդունվողի ներկայացրած յերաշխավորություններն ու գնահատականները:

Այս բոլոր պահանջները հավասարապես վերաբերում են նաև ՀամԼԿՅԵՄ-ի անդամներին: ՀամԼԿՅԵՄ-ի շարքերից ընկերները նույնպես կուսակցության մեջ պետք է ընդունվեն անհատական կարգով:

3. Սկզբնական կուսակցական կազմակերպություններում, ՀամԿ(բ)Կ-ի մեջ յուրաքանչյուր նոր ընդունվողի՝ կուսակցության անդամ ու թեկնածու ընդունելու հարցն անհրաժեշտ ե քննության առնել ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու հիմնարկների կոմունիստների կուսակցական ընդհանուր ժողովներում, անպայման թե՛ կուսակցության մեջ ընդունվողի և թե՛ նրա յերաշխավորների ներկայությամբ: ՀամԿ(բ)Կ-ի շարքերն ընդունվելու վերաբերյալ յուրաքանչյուր դիմում տվողի մասին կուսակցական ժողովներում պետք ե զեկուցի անձամբ սկզբնական կուսակցական կազմակերպության կուսկոմիտեյի քարտուղարը կամ կուսկազմակերպիչը: Ըստ վորում ժողովներում անհրաժեշտ ե լրիվ կարդալ ՀամԿ(բ)Կ-ի նոր անդամ ընդունվողի հարցաթերթիկը և նրա ներկայացրած բոլոր յերաշխավորագրերը:

4. Կուսակցության անդամի կամ կուսակցության թեկնածուի ընդունելությունն իրական ե համարվում միայն այն դեպքում, յեթե ընդունելության վերաբերյալ սկզբնական կուսկազմակերպության վորոշումը հաստատված ե շրջկոմի կողմից: Թե՛ ընդունելության վերաբերյալ սկզբնական կազմակերպության վորոշումը և թե՛ շրջկոմի կողմից նման վորոշման հաստատումը գրանցվում են արձանագրության մեջ ու պահվում արխիվում:

5. ՀամԿ(բ)Կ շրջկոմներում կուսակցության մեջ նոր ընդունվողների հաստատումը կատարվում ե ՀամԿ(բ)Կ-ի մեջ ընդունվողի և համապատասխան սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղարի



ներկայությամբ: Կուսակցության մեջ կատարվող ընդունելության մասին զեկուցում ե սկզբնական կուսկազմակերպության քարտուղարն անձամբ:

* * *

Վերսկսելով կուսակցության մեջ նոր անդամների ընդունելությունը, կուսակցական կազմակերպությունները պարտավոր են հիշել, վոր թշնամի տարրերն առաջիկայում ևս կփորձեն սողոսկել ՀամԿ(բ)Կ-ի շարքերը: Յուրաքանչյուր կուսակցական կազմակերպության խնդիրն ե՝ ամեն կերպ բարձրացնելով բոլշևիկյան զգոնությունը՝ բարձր պահել լենինյան կուսակցության դրոշը և կուսակցության շարքերն ապահովել խորթ, թշնամի ու պատահական տարրերի ներս սողոսկելուց:

ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

29 սեպտեմբերի, 1936 թ.

# ՀԱՄ. Կ(Բ)Կ ԹԵԿՆԱԾՈՒ ՅԵՎ ԱՆԴԱՄ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԴԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. փետրվարի 16-ի վորոշումը)*

1. ՀամԿ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունելիս ընդունելության կատեգորիան կուսակցական կազմակերպությունների կողմից սահմանվում է նայած կուսակցության մեջ ընդունվողի հիմնական զբաղմունքին՝ այն մոմենտին, յերբ նա դիմում է տվել ՀամԿ(բ)Կ շարքերն ընդունվելու մասին:

2. Յերկրորդ կատեգորիայով Համ Կ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունվում են այն ինժեներա-տեխնիկական աշխատողները, վորոնք աշխատում են անմիջականորեն ցեխում կամ տեղամասում՝ միայն արդյունաբերական ձեռնարկություններում ու տրանսպորտում: Այս կարգը չի տարածվում ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում աշխատող մասնագետների վրա:

3. Քաղաքացիական ոդանավատորմիղի ոդաչուները, բորտմեխանիկները, բորտռադիստները, ավիատեխնիկները Համ Կ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունվում են ինչպես բանվորներ՝ առաջին կամ յերկրորդ



կատեգորիայով, նայած արտադրական ստաժին:

4. Տրակտորային բրիգադների կոլտնտեսական բրիգադիրները, տրակտորիստները, կոմբայնավարները Համ Կ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունվում են յերրորդ կատեգորիայով:

5. Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության կատեգորիան վորոշվում է մինչև ուսման անցնելը նրանց ունեցած հիմնական զբաղմունքով:

6. ԲԳԿԲ և ՆԳԺԿ զորքերի զորամասերում անմիջականորեն աշխատող (գնդում, առանձին գումարտակում, առանձին հրետադիվիզիոնում, եսկադրիլիայում, նավի վրա ու ավիապարկում) և ուսումնարաններում, պոլիգոններում, արհեստանոցներում, պահեստներում շարային ու ինժեներա-տեխնիկական պաշտոնների մեջ գտնվող հրամանատարական-պետկազմը ՀամԿ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունվում են յերկրորդ կատեգորիայով: Մնացած հրամանատարական- պետկազմը, այդ թվում ԲԳԿԲ միավորումների շտաբների, ակադեմիաների, գիտա- հետազոտական ինստիտուտների և այլ հիմնարկների ամբողջ հրամանատարական- պետկազմը կուսակցության մեջ ընդունվում են 4-րդ կատեգորիայով՝ վորպես ծառայողներ:

Ռազմական ուսումնարանների կուրսանտները և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր պետկազմը կուսակցության մեջ ընդունվում են ինչպես կարմիր բանակայինները: Գերակետիկ ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարները կուսակցու-

թյան մեջ ընդունվում են ինչպես հրամանատարական–պետկազմը:

Ակադեմիայի ունկնդիրներին ՀամԿ(բ)Կ թեկնածու և անդամ ընդունելիս ընդունելության կատեգորիան սահմանվում է նայած այն բանին, թե ընդունվողն ի՛նչ հիմնական զբաղմունք է ունեցել մինչև ակադեմիայում սովորելու ընդունվելը:

7. Թեկնածությունից ՀամԿ(բ)Կ անդամ ընդունվողների սոցիալական դրությունը վորոշելիս, ՀամԿ(բ)Կ անդամի հաշվառման քարտի «սոցիալական դրություն» գրաֆայի մեջ նշում կատարելու համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով.

ա) բանվորները և գյուղացիները, անկախ այն բանից, թե նրանք կուսակցության անդամ ընդունվել են յերկրորդ կատեգորիայով, թե՞ չորրորդ կատեգորիայով՝ վորպես ծառայողներ, ըստ սոցիալական դրության դասվում են բանվորների և գյուղացիների շարքը:

բ) այն ծառայողները և գյուղացիները, վորոնք թեկնածուական ստաժն անցնելու ընթացքում դարձել են բանվորներ և այդ պատճառով կուսակցության անդամ ընդունվել են վորպես բանվորներ՝ առաջին կամ յերկրորդ կատեգորիայով, դասվում են բանվորների սոցիալական խմբին, անկախ այն բանից, թե նրանք կուսակցության թեկնածու ընդունվել են յերկրորդ, յերրորդ, թե՞ չորրորդ կատեգորիայով, վորպես ծառայողներ կամ գյուղացիներ:

8. Վորոշումն ուղարկել բոլոր շրջկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներին:

2406
38



Սրբագրիչներ՝ Ս. Ցերիցյան, Ա. Բալաբանյան
Գլավլիտի լիազոր № 16037 Տիրաժ 6000 պատ. № 342

«Խ. Հ»-ի հրատ. տպարան, Յերևան 1938 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0186692

271

ԳԻՆԸ 15 Կ.